№ 9 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 24 1895 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 24 № 9

ՔՍԱՆԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆԵՐԿԱՅ 1895 ԹԻԱԿԱՆԻՆ

23-ՐԴ ՏԱՐԻ **„ՄՇԱԿ“** 23-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն գիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղութեամբ։ Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը 2 ռ., մի ամսվանը՝ 1 ռուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է գիտել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», *իսկ արտասահմանից՝* Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հեռագիրներ Թիւրքաց հայերի մասին. Շատ ցաւալի կը լինի. Մամուլի կարծիքը հայոց հարցի մասին. Շվէյցարական մամուլը և հայոց հարցը. Եպիսկոպոսի և քահանաների տուած ուղերձը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Աբբահայր Արսէն Այտընեանի յիսնամեայ յօբելեանը. Աշխատաւորների ընկերակցութիւններ. Մի նոր մասնաժողով.—Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Մարշալ Կանրոբէր. Ֆրանսիական նոր մինիստրութիւն. Նամակ Թիւրքիայից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Օրինական և ոչ-օրինական հարկերը Սասունում.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ
(Հեռագրով)

Մեր թղթակիցը Պետերբուրգից հեռագրում է մեզ յունվարի 22-ին.

„Պետերբուրգի „Новое Время“ լրագիրը, խօսելով Լօնդոնի Թիւրքաց դեսպանին յետ կանչելու և նրա տեղ ուրիշին նշանակելու լուրի մասին, նկատում է, թէ Ռուսաստանին ցանկալի չէ, որ Թիւրքաց Հայաստանը ինքնավարութիւն ստանայ այն ծրագրով, որը Անգլիան ուզում է փաթաթել Բ. Դրան վզին։ Ռուսաստանը կը զգուշանայ որ և է միջամտութիւնից սուլթանի հայ հպատակների գործերում։ Ցանկանալով, որպէս հարեւան, բարի յարաբերութիւններ պահպանել Անգլիայի հետ Ասիայում,—ասում է լրագիրը,—մենք մի և նոյն ժամանակ առիթ չունենք վատացնելու մեր յարաբերութիւնները Բ. Դրան հետ՝ հայոց հարցի պատճառով։“

ՇԱՏ ՑԱՒԱԼԻ ԿԸ ԼԻՆԻ

„Կարդ մը վնասակար խորհրդականներ,—գրում է կ. Պոլսի մեր թղթակիցը,—ջանքեր կընեն նորէն շրջապատել Իզմիրլեան պատրիարքը, և շեղել նրան իր բռնած ընթացքէն։“

Եւ եթէ այդ բանը պատահի, կաւելացնենք մեր կողմից, դա կը լինի մի կատարեալ դժբաղդութիւն թէ Իզմիրլեանի համար, որ սկսել է ժողովրդականութիւն գտնել և թէ Թիւրքահայերի ներքին գործերի համար։

Եւ ճշմարիտ։ եթէ վերջին տարիները կ. Պոլսի պատրիարքարանը դարձաւ խայտառակութիւնների և մեռելութեան աղբիւր, եթէ պատրիարքական աթոռի վրա բազմեցին այնպիսի անարժան անձինք, ինչպէս Աշըգեան և Դիմաքսեան,—դրա պատճառը այն էր, որ յայտնի էֆէնդիների մի խումբ իր ձանկերի մէջ էր առել կ. Պոլսի հայոց բոլոր գործերը, ում կամենում պատրիարք էր ընտրում, և ինչպէս կամենում վճռում և գործում էր։ Ամեն մի բողոք, ամեն մի ճշմարտութիւն, դեռ չը յայտնված՝ խեղդվում, ոչնչանում էր...

Եւ ահա, երբ կատաղած հասարակաց կարծիքի առաջ տեղի տուեց այդ էֆէնդիների սեահոգի խումբը, երբ ոչ միայն Աշըգեաններ և Դիմաքսեաններ դուրս նետվեցին պատրիարքական ընտրելիների ցանկից, այլ նոյն իսկ ամբողջ քաղաքական ժողովի կազմակերպութիւնը կերպարանափոխվեց, և պատրիարքարանը շրջապատեցին նոր մարդիկ,—անմիջապէս կ. Պոլսի հայոց պատրիարքարանում սկսվեց նոր ուղղութիւն, նոր շարժում, նոր ընթացք...

Ապացոյցը մեր աչքի առաջ է...

Բայց միթէ ճշմարիտ, այդ ուրախալի երևոյթից յետոյ, նորից պատրիարքարանը մուտք կը գործեն այն տարրերը, որոնք այնքան տարիներից ի վեր բացի դժբաղդութիւնից և վնասներից ուրիշ ոչինչ չը տուեցին. միթէ, կրկնում ենք, մեր թղթակցի յայտնած երկիւղը իրականութիւն կը դառնի։

Դա կը լինի մի կատարեալ դժբաղդութիւն։ Եթէ Իզմիրլեան, ինչքան էլ նա բարի ցանկութիւններ ունենայ, նորից ընկնի այն մարդկանց ձանկը, որոնց համար ամենաիդեալական պատրիարքը Աշըգեանն էր, և որոնց համար աշխարհի ամենախելօք մարդիկ զանազան Նուրեաններ և Մազսուտներ են,—այն ժամանակ պատրիարքարանի մէջ նորից կը տիրի քծնութիւն, շողոքորթութիւն, խաբեբայութիւն...

Նենգ, սեահոգի, վարձկան, խաբեբայ խորհրդականներ կարող են մեռցնել ամեն մի իշխանաւորի մէջ ամենամաքուր ձգտումները, կարող են շեղել նրան, ցեխի մէջ գցել ամենաժողովրդական անունն անգամ, և նոյն իսկ ստիպել, որ այսօր նա հերքի այն, ինչ որ երէկ ասում էր, և այսօր պաշտի այն, ինչից որ երէկ զզվում էր...

Եւ եթէ կ. Պոլսի նորընտիր պատրիարքը կարող կը լինի հէնց առաջին անգամից յետ մղել այն նենգամիտ, վարձկան խորհրդատուներին և միշտ շրջապատված կը մնայ օրինաւոր, անձնուէր, աղնիւ, անկաշառ մարդկանցով,—այն ժամանակ, հաստատ կարող ենք ասել, նա մեծամեծ գործեր կը կատարէ և կը դառնայ ժողովրդական ու սիրելի։

Հակառակ դէպքում՝ նրա անկումը հեռու չէ։

ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅՈՑ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Պարիզի կառավարչական „Temps“ լրագիրը մի խիստ յօդուած տպեց Թիւրքիայի դէմ այն բանի առիթով, որ Բ. Դուռը չէ թոյլ տալիս օտար լրագիրների թղթակիցներին ճանապարհորդել Փոքր-Ասիայում։ „Temps“ լրագիրը մեղադրում է Բ. Դրանը այն բանի մէջ, որ նա ամեն կերպ աշխատում է „խաբել“ եւրոպական հասարակութիւնը։ Զանազան պետութիւնների մի քանի լրագիրներ, որոնց անպայման անկողմնապահութիւնը և մինչև անգամ յօգուտ Թիւրքիայի մի փոքր նախապաշարված լինելը գաղտնիք չէր ոչ ոքի համար, դատապարտում են Սասունում հայերի ջարդերը։ Բայց Սասունում, որպէս մի լեռնոտ, կղզիացած և յետընկած անկիւնում, մինչև այսօր դեռ շարունակվում են այդ ոչ-օրինական հարկերի վճարումները։

Սասունում այդ ոչ-օրինական հարկերը բաժանվում են երեք տեսակի և կոչվում են տեղական լեզուով՝ բէշ, աղութին և զաֆրթի։

Բէշը յանուն բէկի հողատիրական իրաւունքների պահանջված ամենածանր տուրքն է։ Իրաւաբանական տեսակէտից քննելով, շատ տարօրինակ է թվում Թիւրքիայում մի այդ տեսակ հողատիրական պահանջ։ Ըստ շէրիաթի, Թիւրքիայում բոլոր վարելահողերը արքունական հողեր են (արաղիը միրիէ), և այդ պատճառով իսկ երկրագործը վճարում է տասանորդական տուրքը։ Իսլամական իրաւաբանութիւնը վարելահողի բացարձակ սեփականութեան սկզբունքը չէ ճանաչում։ Գիւղացին, որ տէր է համարվում իր վարած հողին, իսկապէս այդ հողը վարելու իրաւունքին է տէր, արդիւնքի տասանորդը բուն հողատիրոջ՝ սուլթանին վճարելու պայմանով և ուրիշ ոչինչ։

Այսպիսի իրաւաբանական հանգամանքներում ոչնչով չէ կարելի բացատրել ինքնակոչ հողատէր քիւրդի իրաւունքները, եթէ ոչ իր կեղեքիչ ոգով և կառավարութեան դէպի այդ տեսակ հարստահարութիւնները ունեցած գիտակցական, թէ անգիտակցական հակումով։ Առաջինի կեղեքիչ ոգին և երկրորդի դէպի այդ կեղեքումները ունեցած մեծ հակումը աւելի յայտնի կերպով կարող ենք տեսնել, երբ քննենք միւս երկու տեսակ ոչ-օրինական հարկերը։

Աղութինը մի տեսակ գլխահարկ է, որ սասունցի գիւղացին պարտաւոր է վճարել իր գլխի տիրոջ.—«Դու իմ հայն ես», ասում է քիւրդը և պահանջում հարկ,—որ ուրիշ խօսքով կը նշանակէ, թէ ասէր. «Դու իմ ոչխարն ես, ինձ բուրդ պիտի տաս»։ Ո՞ր օրէնքը կարող է ներել մի այդպիսի բան. բայց օր ցերեկով կատարվում է այդ բանը Սասունում։ Գիւղ բէկերը այն աստիճան ապահով տէր են համարում իրանց իրաւունքների, որ իրանց այդ իրաւունքները՝ թէ բէշ լինի և թէ աղութին, ծախում են միմեանց վրա։

Վերջերս Սասունի Աղբիկ գիւղի բէշը, որ Պոզիկցի աշիրէթին էր պատկանում, ծախեցին Խանաւթալի տան վրա 3,000 ղրուշի փոխարէն։ Երբեմն պատահում է, որ բէշը մէկին է պատկանում և աղութինը մի ուրիշի, որը մեծ դժբաղդութիւն է համարվում հարկատու ժողովրդի համար, որովհետև հողի և գլխի տէրերը առանձին-առանձին պահանջում են գրեթէ նոյն հարկը, ինչ որ պահանջելու էր այդ երկու իրաւունքների տէրը, եթէ մի անձ կամ մի աշիրէթ լինէր։

Այստեղ հետաքրքրութեան համար դնում ենք այդ երկու տեսակ ոչ-օրինական հարկերի համար անպատճառ մի ընտանիքից պահանջված իրերի ցուցակը, աւելացնելով, որ դրանց քանակութիւնը կախված է տուողի կարողութեան և պահանջողի անխղճութեան չափից.—դարման՝ դառն կամ ուլ, մածուն և թան։ Աշնան՝ ցորեն, իւղ, ոչխար, չորթան, դուլպա, տրեխ, իրանց գործած շալից շալվար և ամենից յետոյ՝ փող։ Զը պէտք է մոռանալ, որ երբ քիւրդը գալիս է այդ բոլորը տանելու, պէտք է ի պատիւ նրան լաւ ոչխար մորթել, մէկ երկու օր նրան լաւ կերակրել և այնպէս ճամբել։

Մէկ երկու խօսք էլ զաֆրթիի մասին.—զաֆրթին ուրիշ մինչև իսկ ձևական նուիրագործում չունի, եթէ ոչ քիւրդ աշիրաթների աւազակութեամբ ապրելու սովորութիւնը և հայ գիւղացու այդ աւազակութիւններին դիմադրելու անկարող լինելը։ Այդ աւազակային կեղեքումները այնպէս կանոնաւոր կերպով են կրկնվել և այնքան երկար ժամանակ քիւրդ աշիրաթների կողմից դէպի Սասունի հայ գիւղացին, որ ինքնակամ պարտաւոր է համարում վճարել զաֆրթին, որը գլխաւորապէս երկրագործական բերքերից և շորեղէնից է բաղկացած, որովհետև զաֆրթին պահանջող աշիրաթները հովիւներ են և պէտք չունեն կաթնային մթերքների։

Սասունցիներից զաֆրթի պահանջող աշիրաթները հետեւեալներն են՝ բաքրանցիք, խիանցիք, խարքանցիք, պատկանցիք, խոշկանցիք, որոնք ամառը Սասունի մերձակայ լեռներն են գալիս։

Ահա այս օրինական և ոչ-օրինական հարկերի տակ հեծեծում էր Սասունը, այն Սասունը, որ շատերը Թիւրքաց Հայաստանի ամենաազատ գաւառն էին համարում։ Թէ դրաւոր աղբիւրներից, թէ բերանացի մեր հաւաքած տեղեկութիւնների հիման վրա, կարծում ենք, որ Թիւրքաց Հայաստանում շատ քիչ կը պատահեն այնպիսի գաւառներ, ուր ոչ-օրինական հարկերը այս դժոխային և անտանելի դրութիւնը ունեցած լինէին։ Սասունցին մնատեսապէս ուժասպառ էր եղած, և չէր կարող բաւականութիւն տալ մինչև իսկ իր կաշին քերթելով՝ թէ կառավարութեան և թէ քիւրդերին. բողոքից այդ անտանելի դրութեան դէմ. բողոքը անլսելի մնաց. մինչև իսկ կրկնապատկվեցին բռնութիւնները և կեղեքումները։

Ց. Մ.

մար, մոռացեցին յատուկ թղթակիցներ ուղարկել Սասուն։ Այդ լրագիրների թվին պատկանում էր և „Times“-ը։ Նա առաջինն էր, որ սկսեց աշխատել պատշաճաւոր թոյլտուութիւն ստանալու մասին։ Ցամառ չարակամութեան հանդիպելով, խմբագրութիւնը վճռեց, որ աւելի լաւ է ուղղակի դիմել Աստուծուն, քան թէ սուրբերին, և նա իր խնդիրքը հասցրեց սուլթանին։ Ոչինչ չօգնեց։ Աբդուլ-Համիդը ոչ մի թոյլտուութիւն չը շնորհեց։ Այդ հանգամանքը ցոյց է տալիս, որ կանխակալ դիտաւորութիւն ունեն։ Ցանկանում են խաւար, խուսափում են լոյսից, կենդանի մնացած զոհերի բերանները փակում են, վկաներին ստիպում են լռել, հեռացնում են անկողմնապահ հանդիսատեսներին։ Այդ բոլորը շատ բնաւորիչ է։ Քաղաքակիրթ աշխարհը գիտէ, թէ ինչ եզրակացութիւն կարելի է հանել գործունէութեան մի այդպիսի եղանակից։ Բայց մի և նոյն ժամանակ դա շատ անշնորհ մի վարմունք է, որովհետև քննութիւնը առաջուց կասկած է ծնեցնում և մինչև անգամ զրօի նշանակութիւն է ստանում։ Ոչ կը շահվի դրանից։ Վերջը, շատ կարելի է, շատ կը փոշմանեն Իլդիզ-Կիոսկում, որ իզուր մերժեցին պետութիւնների բարեացակամ խորհուրդները և կրկին հանդէս բերեցին այն Նեմեզիդան, որը արդէն մի անգամ, 1876 թուի անցքերից յետոյ, այնպիսի խիստ հարուած հասցրեց Օսմանեան կայսրութեանը“։

Կ. Պոլսից „Հավասի գործակալութիւնը“ ստացել է հետևեալ հեռագիրը. „Սուլթանը Մունիր-բէյին ուղարկեց Իզմիրլեան պատրիարքի մօտ՝ բացատրութիւններ պահանջելով այն տեսակցութիւնների առիթով, որ տեղի ունեցան պատրիարքի մօտ ռուսաց, ֆրանսիական և անգլիական դեսպանների հետ։ Այդ տեսակցութիւնների ժամանակ, ինչպէս ենթադրվում է, քննվում էին հայոց գործերը և գլխաւորապէս Սասունի անցքերը։ Սուլթանը պահանջում է, որպէս զի պատրիարքը ներկայացնի այն առարկաների ցուցակը, որոնց մասին խօսվել է այդ տեսակցութիւնների ժամանակ“։

Լոնդոնից հաղորդում են հետևեալը. „Սըր Ուլիամ Հարկուրթ մի ճառ արտասանեց Դերբիում, ասելով, թէ դեռ երբէք Եւրոպայի խաղաղութիւնը այնպէս ապահոված չէ եղել, ինչպէս ներկայումս։ Այդ առաջաբանն անելուց յետոյ, սըր Հարկուրթ շարունակեց. „Կառավարութիւնը, — ասեց նա, — կարողացաւ մեծ պետութիւնների համաձայնութիւնն ստանալ՝ նպատակելու անկարգութիւնների դրծի քննութեանը Հայաստանում։ Դա շատ նշանաւոր փաստ է և, ի հարկէ, կառավարութիւնը չի թողնի իր դիրքը, մինչև որ չիրագործի իր առաջադրած խնդիրները“։

Լոնդոնից „Բէյտերի գործակալութեանը“ հեռագրում են, որ երկու անգլիացի ժուրնալիստներ, անցագիրներ ստանալով լորդ Կիմբերլէից Կ. Պոլիս գնալու համար՝ հայոց հարցի վերաբերմամբ տեղեկութիւններ ստանալու նպատակով, անցագիրները ներկայացրին Թիւրքաց դեսպանութեանը, պահանջելով, որ դեսպանութիւնը վաւերացնէ ստորագրութիւնը։ Դեսպանը ուղարկեց ժուրնալիստներին Թիւրքաց ընդհանուր հիւպատոսի մօտ, որը, սակայն, հրաժարվեց վաւերացնել ստորագրութիւնները. այդ մասին ժուրնալիստները տեղեկացրին լորդ Կիմբերլէին։

Անգլիական „Daily News“ լրագրի թղթակիցը Կ. Պոլսից հեռագրում է յունվարի 11-ից հետևեալը. „Հայկական յանձնաժողովը հասաւ Մուշ, երկուշաբթի օր, ամսի 9-ին։ Սուլթանի մի բարձր պաշտօնեայ երէկ այցելեց պատրիարքին։ Բրիտանական, ռուսական և ֆրանսիական դեսպանները իրանց այցելութիւնները արել էին աւելի վաղ։ Պատրիարքի վարմունքները շատ նպաստաւոր տպաւորութիւն են գործում։ Նա ներկայանում է մի այնպիսի անձն, որ գիտէ իր պարտաւորութիւնները, և մտադիր է օրինական կերպով նրանց պաշտպանել։

Մարսէյլից հեռագրում են Լոնդոնի լրագիրներին. „Անգլիական նամակաբերի պայուսակը բռնելը Կ. Պոլսում ոչ ոքի չը զարմացրեց այստեղ, որովհետև այս վերջին երեք տարվայ ընթացքում Բ. Դուռը հետամուտ էր գտնելու Լոնդոնի անգլո-հայկական ընկերութեան թղթակիցն ետին, որոնց մասին ենթադրում է, որ նրանք պատկանում են մահմէտական յեղափոխական ընկերութեան, որի անդամներից կան նաև Իլդիզ-Կիոսկում։ Սուլթանն այդ մահմէտականներից նոյնչափ վախենում է, որչափ և հայերից։“

ՇՎԷՅՑԱՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ԵՒ ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ

Ժընեվի յայտնի «Le Genevois» լրագրի յունվարի 16-ի համարում հրատարակված է մի ուշագրաւ յօդուած Թիւրքաց հայերի մասին, Ս. Շ. ստորագրութեամբ, որից հարկաւոր ենք համարում մի քանի կտորներ առաջ բերել.

«Ցեղ պէտք է պատմեմ մի շարք դէպքեր, որ կատարվում են Թիւրքաց Հայաստանում, մի շարք քստմնեցուցիչ դէպքեր, որոնցից, ինչպէս նկատում է «Figaro»-ն, քաղաքակրթված աշխարհը պիտի ամաչի։ Բաղմաթիւ արիւնհեղութիւնները, սոսկալի և չը լսված անզթութիւնները, Թէմիրլէնգի ժամանակներին յատուկ գաղանութիւնները և զզուելի ոճիրները վրէժխնդրութիւն են գոչում, վրէժ են պահանջում անգութ երկնքից, որը անողոքելի է մնում դէպի մի ճնշված ազգի անբաղդ զաւակները։

«Եղեռնագործութիւնները սկսված են ոչ թէ 1894 թուի յունվարին, ինչպէս գրում է «La Justice» լրագրի մէջ պ. Ցրգուին, այլ մի քանի տասնեակ տարիներից ի վեր, իսկ 1878 թուից, այսինքն հանրածանօթ 61-րդ յօդուածի գրվելուց յետոյ, այդ հարստահարութիւնները աւելի անգութ կերպարանք են ստացել և աւելի յաճախ կրկնվելով՝ մի հետաքրքրական երևոյթ են ներկայացնում։

«Քիւրդեր, չէրքէզներ, Թիւրքեր, նոյն իսկ Թիւրք պաշտօնեաներ,—ահա այդ բոլոր ոճիրների, աւարառութիւնների, ամեն տեսակ սրբապղծութիւնների, բռնաբարութիւնների, սպանութիւնների, հրդեհների իսկական հեղինակները։

«Եւ գիտէք ինչ է անում Բ. Դուռը այդ անտանելի զրկանքների առաջն առնելու համար։ Նա զինում է քիւրդերին, նրանցից կազմում է «Համիդիէ» գունդեր և նրանց յանձնում հայերի պաշտպանելու գործը։ Ո՞ւմ դէմ պէտք է պաշտպանեն այդ քիւրդերը հայերի կեանքը։ Նոյն իսկ իրանց դէմ, քիւրդերի դէմ։ Այսպիսով նա կազմեց բաշիբուզուկ քիւրդերի աւազակային խմբեր, արդելելով աշխատող և խաղաղասէր հայ ժողովրդին ինքնապաշտպանութեան համար զէնք կրել. մի խօսքով նա յանձնեց զառը գայլի հսկողութեան։ Եւ այս բոլորը արաւ Թիւրք կառավարութիւնը, որպէս զի արդարութիւնը և հաւասարութիւնը վերահաստատվի... Ի՞նչ դեղեցիկ երկիր»։

Ապա յօդուածագիրը համառօտ նկարագրելով մինչև Սասունի վերջին կոտորածը հայերի կրած տառապանքները, շարունակում է այսպէս.

«Հարցրէք Հայաստանի հողին՝—քանի՞ քանի անմեղ զոհեր է նա ծածկում իր ծոցում։—Սա մի մարդկային սպանդանոց է, ասում է «Journal de Genéve», Հայաստանի վերջին կոտորածների առիթով։ Այո՛, սա մի մարդկային սպանդանոց է, մի յաւիտենական սպանդանոց։

«Ահա այսպէս է Թիւրքիան ուզում իրագործել 61-րդ յօդուածը. նա ուզում է բնաջինջ անել հայ տարրը Փոքր-Ասիայում, որպէս զի Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններին ասի. «Հայաստանում այլ ևս հայ չը կայ, հետևապէս այլ ևս գոյութիւն չունի «Հայկական հարցը»։

«Le Genévois» լրագրի խմբագրութիւնը, հրատարակելով այս յօդուածը իբրև առաջնորդող, իր կողմից աւելացնում է ի միջի այլոց հետևեալը.

«Եթէ Եւրոպան տանի այդ անգթութիւնները, եթէ քաղաքականութիւնը և դիպլոմատիան միջոց չը տան Թիւրքահայերին պաշտպանել իրանց կեանքն ու գոյքը, այն հայերին, որոնց իր պաշտպանութիւնն է խոստացել, այն ժամանակ ամօթ է նոյն իսկ խօսել եւրոպական քաղաքակրթութեան, և այն պարտքերի ու իրաւունքների մասին, որ նա դնում է մեզ վրա»։

ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՏՈՒԱԾ ՈՒՂԵՐՁԸ

Անցեալ անգամ հաղորդեցինք, որ Եփրնէյի հայոց առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը և վեց քահանաներ՝ 28 հայ էֆէնդիների հետ մի շնորհակալութեան ուղերձ են կազմել և ուղարկել սուլթանին։

Ահաւասիկ այդ ուղերձի օրինակը.

«Բարձրեալն Աստուած, որչափ որ աշխարհս գոյութիւն ունենայ, ամենայն փառք պահպանէ ու անսասան պահէ Վ. Հ. Սուլթանն, որ իբրև աշխարհի կարգապահութեան միակ կապն և հանրութեան անդորրութեանը պահպանման համար ստեղծված է։

«Ժամանակէ մը ի վեր, մեծ վիշտով կը լսուի լրագիրներէն թէ Անատոլուի և կայսերական կուսակալութեանց մէկ քանիին մէջ, հայ հասարակութենէն կարգ մը մարդիկ, որոնք ինքզինքին չեն գիտեր, և իրենց հասարակութեան օրինաւոր ու ճշմարիտ շահերը չեն հասկնար, կը համարձակին չը վայլող ընթացք մը բռնել։

«Հայ հաւատարիմ ժողովուրդը 500 տարիէ ի վեր պահպանած է Վ. Հ. Սուլթանին փառապանծ նախնիքներուն թեին տակ իրենց կրօնքը, լեզուն և ազգութիւնը և ասոր հետ նաև ունեցած են հանգիստ և երջանիկ վիճակ մը։ Այս վիճակին համար շնորհակալութիւն յայտնելը կը նկատենք մեր առ օսմանեան կառավարութիւնն ունեցած հաւատարմութեան սրբազան պարտքերէն մին և ասոր փոխարէն արժանանալ մշտակենցաղ Օսմանեան պետութեան պաշտպանութեան և վստահութեան։

«Նա մանաւանդ Վ. Հ. Սուլթանին այս արդարութեան դարուն մէջ արտադրուած, այնքան օգտակար և գեղեցիկ գործերը, որոնք գահակալութեան օրէն ի վեր առանց բացառութեան բոլոր օսմանեան հպատակներուն նիւթական և բարոյական կեանք մը պարգևած են, հայ հպատակ ժողովրդին ալ անոնցմէ օգտուած ըլլալուն, տարակոյս չի կայ որ վերոյիշեալ անձերուն բռնած ընթացքը իրենցմէ ի զատ և ոչ մէկու մը հաւատարմութեան զգացումներուն չը պիտի կրնայ վնասել։ Ամեն պարագայի և ամեն տեղ մենք կարօտ ըլլալով Վ. Հ. Սուլթանին, կը պաղատինք որ իր գթառատ ակնարկը չի հեռացնէ հայ հպատակ ազգին վրայէն։»

Ուրիշ ոչինչ չէ մնում, բայց եթէ Հայաստանեայց եկեղեցին ի շարս սրբոց դասէ այդ մի ատիկ եպիսկոպոսին, վեց քահանային և 28 էֆէնդիներին...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱԲԲԱՀԱՅՐ ԱՐՍԷՆ ԱՅՏԸՆԵԱՆԻ ՅԻՍՆԱՄԵԱՑ ՅՕԲԵԼԵԱՆԸ

Մենք արդէն հաղորդեցինք, որ այս տարվայ նոյեմբերի 2-ին պէտք է տօնվի Վիէննայի Մխիթարեան միաբանութեան աբբահայր Արսէն Այտընեան արքեպիսկոպոսի քահանայութեան յիսնամեայ յօբելեանը։

Մեզ հաղորդում են, որ այդ առիթով Վիէննայի «Հանդէս Ամսօրեայի» խմբագրութիւնը որոշել է միաբանութեան մատենադարանի հայերէն ձեռագիրների ցուցակը հրատարակել շքեղ տպագրութեամբ և հայ գրողների ու բանասէրների կողմից նուիրել յօբելեարին։ Հրատարակութեան ծախսը հաշված է 6000 գուլդէն։

Որպէս զի թէ հրատարակութեան ծախսը մասամբ հոգացվի և բոլորը «Հանդէս Ամսօրեայ»-ի խմբագրութեան վրա չը ծանրանայ և թէ հայ գրողները մասնակցեն այդ նուէրին, ամսագրի խմբագրութիւնը բացել է բաժանորդագրութիւն, և Ռուսաստանի համար բաժանորդագին նշանակված է 15 ռուբլի։

Մեր կարծիքով, Վիէննայի Մխիթարեան միաբանութիւնը լաւ ձև է որոշել իր աբբահօր յօբելեանը տօնելու համար։ Միաբանութեան մատենադարանը պարունակում է հայ ձեռագիրների մեծ հարստութիւն և հայր Արսէն Այտընեան քիչ չէ նպաստել մատենադարանի այդ մասի ճոխութեան։

Այդ առիթով մենք անօգուտ չենք համարում համառօտ կերպով ծանօթացնել Ռուսաստանի հայ հասարակութիւնը Այտընեան արքեպիսկոպոսի ունեցած նշանակութեան և նրա գրական գործունէութեան հետ։

Հայր Արսէն Այտընեան շատ գրուածքներ ունի, բայց նրա գրուածքների «գլուխ գործոցը» 1866-ին հրատարակած «Քննական քերականութիւն արդի հայերէն լեզուի» և «Քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայ լեզուի» հեղինակութիւններն են, որոնցով նա ջախջախեց գրաբար լեզուի պաշտպանների վերջին նեցուկը ու յոյսը, և իր հեղինակաւոր խօսքով մեծ զարկ տուեց աշխարհաբարի զարգացման։ Այտընեան ամենազօրաւոր փաստերով ապացուցեց, որ աշխարհաբար լեզուն միշտ գոյութիւն է ունեցել գրաբարի հետ զուգընթացաբար, որ նա ժողովրդի կենդանի լեզուն է եղել և չէ առաջացել արուեստական կերպով։

Իր այդ նշանաւոր աշխատութիւնով Այտընեան ներկայ դարու հմուտ հայերէնագէտի հռչակը ստացաւ և աշխարհաբար լեզուի բարգաւաճման, մանաւանդ նրա քերականութեան արուեստին մեծ ծառայութիւններ արեց։

Եւ ահա այսօր մի յարմար առիթ է ներկայանում հայ բանասէրների համար յարգել այնպիսի մի անխոնջ և արդիւնաւոր անձի գրական գործունէութիւնը։

ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս օրերս լոյս տեսաւ Պետերբուրգում Գ. Տիգրանեանի մի հետաքրքիր աշխատութիւնը՝ հանքագործական ընկերակցութիւնների մասին, որ կը բռնում է հետևեալ վերնագիրը. «Обзоръ дѣятельности горнозаводскихъ товариществъ при казенныхъ горныхъ заводахъ и рудникахъ въ періодъ 1881 по 1893 годъ»։

Այդ ընկերակցութիւնների նպատակն է մշակների միմեանց մէջ փոխադարձ օգնութիւն, ծերերին, որբերին և հիւանդներին խնամելը և բարոյական աջակցութիւն։ Ընկերակցութիւնը հիմնում է օժանդակիչ դրամարկղ, որի հիմնադրամը կազմվում է անդամավճարներից ուղղակի վերցրած փողերից և նուիրատուութիւններից։ Անդամավճարները վերցվում են օրավարձից, յատկացնելով 2—3%. օժանդակիչ դրամարկղի կանոնադրութիւնը հաստատվել է 1881 թուականի ապրիլի 9-ին։ Եւ այդ ժամանակից սկսվում է այդ ընկերութիւնների կանոնաւոր գործունէութիւնը։

Այժմ արդէն գոյութիւն ունեն 15 ընկերակցութիւններ, որոնցից ամենահինը կազմված է դեռ 1862 թուին հիւսիսային Կովկասի Ալագիրի արծաթեայ հանքում։ Այդտեղ 1881 թուին արդէն կար պատրաստի 27,502 ռուբլի 90 կոպէկ, իսկ այժմ կրկնապատկվել է, հասնելով 1893 թուին 54,935 ռ. 65 կոպէկ, 152 անձանց անդամակցութեամբ։

Բոլոր 13 ընկերակցութիւնների մէջ 1881 թուին եղել է 396,344 ռ. 13 կ., որ առ 1 յունվարի 1894 թուի հասել է 1,048,312 ռ. 37 կոպէկ։

Այդ ընկերակցութիւնների աջողութիւնը ցոյց է տալիս, որ խելացի աջակցութեան և հովանաւորութեան միջոցով կարելի է պահպանել և զարգացնել այնպիսի համակրելի գործ, ինչպիսին է աշխատողների փոխադարձ օգնութեան գործը։

Ընկերակցութեան ներքին գործավարութիւնը կատարվում է ընտրողական մարմնի միջոցով, որ ճիշդ հաշիւներ է տալիս իւրաքանչիւր տարի։

Ցանկալի է, որ հանքագործական աշխատողների այդ աջող և համակրելի օրինակին հետևէին և միւս արդիւնագործութիւնների մէջ աշխատող բանւորները և վարպետները։

ՄԻ ՆՈՐ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ

Նշանաւոր Մուղանի անապատի շատ տեղերում մնացել են հին առուների, ջրամբարների և դիւղերի աւերակներ, որոնք ապացուցանում են, որ մի ժամանակ այդտեղ եռում է եղել կեանքը։ Առուներից մի քանիսը կարող են վերանորոգվել փոքր ծախսով. իսկ մեծ անապատի ընդհանուր տարածութիւնը, որ 600,000 դեսեատինից աւելի է, ջրով ոռոգվելու համար պահանջում է միլիոններ։

Մի քանի տասնեակ տարիներ սրանից առաջ, անգլիական երկու ինժեներներ՝ Բելլի և Դաբ, հրաւիրված էին Կովկասեան փոխարքայի կողմից՝ մշակելու մի ծրագիր Կովկասի անապատների ոռոգման համար։ Այդ ինժեներները ներկայացրին մի մեծ ծրագիր լայն և համարձակ առաջարկութիւններով և յոյս տուին, որ ջուր կարելի է վերցնել եղած գետերից մեքենայական և երկրաչափական մի ամբողջ սիստեմի միջոցով։ Այդ ծրագրի իրագործումը իր բոլոր մանրամասնութիւններով պահանջում է մինչև 300 միլիոն ռուբլի ծախք։

Այդ ծրագիրը մնաց առանց ընթացք ստանա-

լու մինչև այժմ։ Մինչդեռ, բաւական չէ, որ չաւելացան նոր առուները, շատ տեղ աւերվեցին և փչացան գոյութիւն ունեցածները։

Երկրագործութեան մինիստրութիւնը վերջապէս ուշք դարձրեց այդ խնդրի վրա և կազմելով մասնաժողովներ՝ ուղարկեց Անդրկովկաս, որ նրանք տեղն ու տեղը ուսումնասիրեն Մուղանի և ուրիշ անապատների պայմանները և ներկայացնեն ծրագիրներ ջուր անցկացնելու և ջուր բաշխելու նպատակով։

Այդպիսի մի մասնաժողով հասել է Թիֆլիս և այժմ այստեղ ժողովում է անհրաժեշտ պլանները և նիւթերը և շուտով պէտք է ճանապարհ ընկնի դէպի Մուղան։

Լաւ կայ, որ շուտով նոյն տեսակ հետազօտութիւններ պէտք է կատարվեն և Երևանեան նահանգում։ Ցանկալի է, որ այս անգամ հետազօտութիւնները միայն հետազօտութիւններ չը մնային և շուտով իրագործվէին կեանքի մէջ, աւելացնելով մշակվող հողի քանակութիւնը և բարձրացնելով եղած վարելահողի արդիւնաբերութիւնը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր թղթակիցը Պետերբուրգից մեզ հեռագրում է յունվարի 22-ից հետևեալը. «Մինիստրների մասնաժողովի Բարձրագոյն հաստատված կանոնադրութեամբ, յունվարի 13-ին, թոյլատրված է հիմնել օժանդակիչ դրամարկղ՝ Բագուի նաւթային հանքերում ծառայողների և բանւորների համար»։

—

Առաջիկայ ուսումնական տարվանից, այն է 1895 թ-ի սեպտեմբերից, հայոց եկեղեցականական դպրոցներում ուսուցիչ և ուսուցչուհի կարող են լինել միայն նրանք, որոնք ցենզ կունենան։

—

Իտալիայի Միլան քաղաքից մեզ գրում են հետևեալ տեղեկութիւնները. «Շուտով բեմ է դուրս գալու հայ երգիչ Արշակ Կոստանեան, որը շատ հիանալի և մշակված ձայն ունի—tenore։ Նոյնպէս պէտք է բեմ դուրս գայ և հայ օրիորդ Եղիսաբէթ Խոջայեան՝ Վերդիի «Traviata» օպերայում։ Երկուսն էլ մեծ ապագայ ունեն։ Երգիչ Կարապետ Ծովակն էլ բաւական մեծ առաջադիմութիւն է անում։ Երգիչ Ամիրջանեան արդէն պատրաստ է մասնակցելու մի քանի նշանաւոր օպերաներում»։

—

Մենք ստացանք մի նոր օրացոյց ռուսերէն լեզուով «Тифлисскій настольный календарь» ներկայ 1895 թվականի համար, հրատարակութիւն Հէրցէնշտէյնի։ Այս երկրորդ տարին է, որ Հէրցէնշտէյնը հրատարակում է իր օրացոյցը և այս անգամ անհամեմատ աւելի լիակատար և բովանդակալի է, քան անցեալ տարի։ Բացի բոլոր դաւանութիւնների օրացոյցներից, սա պարունակում է Թիֆլիսին վերաբերեալ զանազան հետաքրքրական տեղեկութիւններ։ Օրացոյցի գինը թանգ չէ, այն է 25 կոպէկ։

—

Մենք ստացանք Գանձակի ս. Յովհաննէս եկեղեցու «Հաշիւը» առանձին բրոշիւրով տպագրած, 1893 և 1894 թվականներին վերաբերեալ, որ հրատարակել է այդ եկեղեցու նախկին երէցփոխ Մկրտիչ Նաբաթեանը։ Մեր գաւառական քաղաքների մէջ շատ հազիւ է պատահում, որ մի երէցփոխ հրատարակէ իր գործունէութեան մանրամասն հաշիւը, ուստի ցանկալի էր, որ միւս քաղաքների երէցփոխները ևս հետևէին այդ գեղեցիկ օրինակին։ Հաշուից երևում է, որ Գանձակի ս. Յովհաննէս կոչված եկեղեցին տարեկան մօտ 7000 բուբլի եկամուտ և նոյնչափ ևս ծախս ունի, իսկ դրամագլուխ 34,564 ր. 90 կ.։ Գլխաւոր ծախսը լինում է ծխական դպրոցների վրա։

—

Մայրաքաղաքի լրագիրների խօսքով, մէչչանների վարչութիւնները կը վերացվեն և դրանց գործերը կը յանձնվեն քաղաքային վարչութիւններին։

—

Իզմիրի բնակիչ Յովհաննէս Միրիմանեանց նուիրեց 1895 թ-ի «Մշակի» մի օրինակ Իզմիրի հայոց դպրոցին։

—

Ալէքսանդրօպոլի գաւառի Բաշ-Շիրակի գիւղից, Արշակ Սիմէոնեանց նուիրեց 1895 թ-ի «Մշակի» մի օրինակ այդ գիւղի հայոց դպրոցին։

—

Աքրօպակերտից ստացանք 8 բուբլի, որ հանգանակված է այդ գիւղի մի խումբ երիտասարդների մէջ, որպէս զի այդ փողով «Մշակի» մի օրինակ ուղարկենք այդտեղի հայոց դպրոցին։

—

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են. «Մի երկու օր առաջ այստեղ եկան բուն սասունցի պանդուխտներ, վեց հոգի. մէկը կին էր։ Բոլորն էլ առոյգ երիտասարդներ էին, 18-ից մինչև 25 տարեկան, և ականատես են եղել վերջին դէպքերին։ Անօգնական պանդուխտների ճանապարհի ծախքի համար այստեղ Ե. Մամիկոնեանց և Մ. Մարտիրոսեանց, խանութներից հաւաքելով մի պատկառելի գումար, յանձնեցին նրանց։ Պանդուխտները ճանապարհ ընկան դէպի Թիֆլիս»։

—

ԶԱՆԳԵԶՈՒՐ գաւառի Խնձորէսկ գիւղից մեզ գրում են. «Յունվարի 14-ին մեր գիւղի ուսումնարանի դահլիճում հանդէս կատարվեց Կաթողիկոսի անուանակոչութեան առիթով։ Դահլիճը լի էր բազմութիւնով։ Ուրախալին այն էր, որ հանդիսին ներկայ էին շատ կանայք։ Աշակերտները լաւ երգեցին մի քանի ազգային երգեր և կարդացվեցին մի քանի խրատական յօդուածներ։ Ժողովուրդը շնորհակալ հեռացաւ հանդէսից»։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի 26-ին, քաղաքային դպրոցի դահլիճում, նոյն դպրոցի ինսպեկտոր Դեվդորիանիի նախաձեռնութեամբ և ուսուցչական խմբի համերաշխ գործակցութեամբ կայացաւ աշակերտական զրականական երեկոյ։ Մուտքը ձրի էր և տօմսակները նախօրօք ուղարկված էին հիւրերին։ Քաղաքիս ինտելիգենտ, երկու սեռի խուռն բազմութիւնը լցրել էր դահլիճը. իւրաքանչիւր ընթերցումից կամ երգից յետոյ դահլիճը թնդում էր ծափահարութեամբ. կարդացին նմանապէս հայերէն և թուրքերէն ոտանաւորներ։ Երգեցիկ խումբը երգում էր ռուսերէն, հայերէն, վրացերէն և թուրքերէն երգեր։ Հանդէսը վերջացաւ՝ «Աբրահամը զոհ է բերում խահակին» կենդանի պատկերով։ Հանդիսականները ցրվեցին ուրախ տպաւորութեան տակ»։

—

ԱՍԽԱԲԱԴԻՑ մեզ գրում են. «Մի քանի օր է արդէն, որ հիւր է այստեղ 14 տարեկան Ջութակահար Դումչեվ. նա 4 անգամ կենցերտ տուեց կլուբի դահլիճում, և բաւական աջողութիւն ունեցաւ»։

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Արարատի» 1892 թ. համարներից մինում պարզ յայտարարված է, որ հոգաբարձութեան նախագահ-քահանան իրաւունք չունի իր խնամատարութեան յանձնված ուսումնարանում կրօնուսոյցի պաշտօնը կատարելու, այն ինչ մեր չարաբաղդ ուսումնարանում այս կարգադրութիւնը զանցառութեան է տուած։ Հարցնում ենք՝ ինչի համար է օրէնքը, եթէ նա մնում է անիրագործելի։»

—

ՄԵԾ-ԱՐԽՎԻԼԻ գիւղից մեզ գրում են. «Ամսիս 1-ին դպրոցի դահլիճում տեղի ունեցաւ մի գրականական առաւօտ։ Թէև ժողովուրդը ըստ տեղական սովորութեան մեր էր գալիս «նոր-տարի» շնորհաւորելու, բայց և այնպէս հանդէսը գրաւել էր ահագին բազմութիւն թէ արական և թէ իգական սեռից։ Խոր տպաւորութիւն թողեց Սրուանձտեանի «Մշեցի հայոց նոր-տարին» յօդուածը, որի ընթերցանութեան ժամանակ շատերի աչքերում նկատվում էին արտասուքի կաթիլներ... Մանկական ներկայացումից յետոյ մի կողմում երգեցիկ խումբը երգում էր ժողովրդական երգեր, իսկ միւս կողմում խնամակալ հոգաբարձուները աշակերտներին և աշակերտուհիներին մրգեղէն էին բաժանում... Հանդէսը վերջացաւ ժամը 12-ին։

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Այսօր այստեղի չոգենաւային մի արտելէշչիկ, ումն Բ., իր ձեռքի տակ բանող մօտ 20 հոգի մշակներ բանտարկել տուեց, իբրև անցագրեր չունեցողներ։ Բայց իսկական պատճառը այդ չէր, այլ այն, որ թէ այդ 20 հոգին և թէ դրանց հետ շատերը չէին համաձայնվել նրա նշանակած գնով բանելու, որովհետև առաջվայ 1 ր. 20 կ. օրավարձը կամաց-կամաց պակասեցնելով, հասցրել էին 60 կոպէկի։ Իսկ վերջերս այնտեղ էր հասել, որ 60 կոպէկով վարձում էին, բայց փողը վճարելու ժամանակ, 50 կոպէկ էին տալիս։ Ով պէտք է պաշտպանի այդ խեղճերին՝ այդ տեսակ հարստահարութիւնների դէմ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՐՇԱԼ ԿԱՆՐՕԲԵՐ

Հեռագրից արդէն յայտնի է, որ մարշալ Կանրօբէր վախճանվեց, և ֆրանսիական կառավարութիւնը 20,000 ֆրանկ որոշեց մարշալին թաղելու համար։

Կանրօբէր ծնվեց 1809 թվին. նա իր ուսումն առաւ Սէն-Սիրի զինուորական դպրոցում և 1828 թվին ստացաւ օֆիցէրի աստիճան, իսկ 1850 թվին գեներալի աստիճան։ Նա օգնեց Նապոլէոնին 1851 թվի պետական յեղափոխութիւնը կատարելու։

Կանրօբէր մեծ դեր խաղաց Կրիմի պատերազմում։ Նա Սանտ-Արնօի մահից յետոյ գլխաւոր հրամանատար նշանակվեց, բայց անգլիացիների հետ տարաձայնութիւններ ունենալու պատճառով հրաժարվեց այդ պաշտօնից, և յետ կանչվեց Ֆրանսիա։ 1856 թվի մարտին Կանրօբէր մարշալ նշանակվեց, իսկ 1858 թվին արևելեան զօրաբաժնի հրամանատար։ Իտալական պատերազմի մէջ, 1859 թվին, մարշալ Կանրօբէր հրամանատար էր 3-դ զօրաբաժնի և քաջ հանդիսացաւ Մաժենդայի մօտ եղած կռւում, բայց Սոլֆերինօի մօտ եղած կռւի ժամանակ չը կարողացաւ իր ժամանակին օգնութիւն հասցնել գեներալ Նիլին։

Ֆրանս-պրուսական պատերազմում ևս մասնակցեց Կանրօբէր, և Մեցի պաշարման ժամանակ գերի ընկաւ և տարվեց Կասսէլ. ապա խաղաղութիւնը կապվելուց յետոյ վերադարձաւ Ֆրանսիա։ Մինչև Նապոլէոն III-ի որդու մահը Կանրօբէր բոնապարտեան կուսակցութեան ղեկավարներից մէկն էր։ 1879 թվից նա սենատի անդամ էր։

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆՈՐ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆ

Նոր մինիստր-նախագահ Ռիբօ 53 տարեկան է. նա առաջ փաստաբան էր. 1874 թվին արդարադատութեան մինիստրութեան մի բաժանմունքի գլխաւոր էր, 1878 թվին ընտրվեց պատգամաւորների ժողովի անդամ, իսկ 1890 թվից մինչև 1893 թիւը արտաքին գործերի մինիստր էր։ Իր հրաժարականից յետոյ այլ ևս ճառեր չէր խօսում պատգամաւորների ժողովում և միայն 1894 թվին մի ճառ արտասանեց Մադագասկարի մասին։

Արդարադատութեան մինիստր Տրարիէ 55 տարեկան է, փաստաբան. նա սենատի մէջ Բուլանժէի դէմ սկսված դատաստանական քննութեան ղեկավարն էր։ Տրարիէ խաղաղութեան անկեղծ կողմնակից է։

Ներքին գործերի մինիստր Լէդ, 38 տարեկան, փաստաբան է և բանաստեղծ. նրա բանաստեղծութիւնները արժանացան ակադէմիական մրցանակին։

Առևտրի մինիստր Լէբօն, 36 տարեկան, հրապարակախօս է։ Նա ֆրանսիական պատգամաւորութեան քարտուղար էր 1890 թվին Բերլինում կայացած բանւորական կոնդրէսում։

Գուանկարէ, ժողովրդական լուսաւորութեան մինիստրը, 35 տարեկան է, փաստաբան։

Կոլոնիաների մինիստր Շոտան բժիշկ է։ 1889 թվին մեր էր Պարիզում։

Երկրագործութեան մինիստր Գադօ՝ բժիշկ է։

Հասարակական աշխատանքների մինիստր Դիպլիի-Դիւտան 48 տարեկան է, փաստաբան։

Զինուորական մինիստր գեներալ Ժամոն, նախկին զինուորական մինիստր Մերսիէի հակառակորդ է և զօրքի թիւը պակասեցնելու կողմնակից է։

Ծովապետ Բէհնար ժողովրդականութիւն ունի նաւատորմում։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԲԻԱՑԻՑ

Տրապիզոն, դեկտեմբերի 15-ին

Մուշէն ստացված տեղեկութիւնները շատ աղխուր են։ Անտէր մնացած լեռնցիք յետին ծայր թշուառութեան մէջ են։ Կառավարութիւնն տեսնելով, որ ողջ մնացած սասունցիք, իրանց վլատակաց մէջ, երկար չեն կարող դիմանալ սաստիկ ցրտին ու բքին, այլ տեղն ու տեղ պէտք է սառչին, հետևապէս և ամօթով կը լինի քրիստոնեայ պետութիւնների առաջ, հաւաքում բոլորին բերում է ի Մուշ՝ հայ գիւղերից վրա բաժանում, որոնք պէտք է պահեն պատսպարեն իրանց թշուառ եղբայրներին։

Գիւղերից շատերն մեծ սիրով են յանձն առնում այդ բեռը, բայց տարաբաղդաբար, մի քանիսն էլ չեն յօժարանում լեռնցոց պահելու, կասկածելով յետագայ արկածից։ Ես վերջապէս, այսօր, Մշոյ դեղջկական թօնիրի շուրջ նստոտել, կըրծում են կորեկէ չոր հացի պատառը սասունցի և դաշտեցի մանուկներն։

Մշոյ շուկան, դատարանի դուռն ու փողոցներն լեցված են թշուառ լեռնականներով, և չը նայած եղանակի խստութեան և ցրտին, այդ խեղճերն հագին ունեն իրանց սովորական փօթիկներն, թևերն ու կուրծքը բաց, ման են գալիս քաղաքում ու գիւղերում և մուրացկանութեամբ հաց ճարելով ապրում են. բայց ինչ է լինելու դոցա վիճակ. յայտնի չէ. սարսափելի վիճակ. մըշեցին ինքն է մուրացիկ, ընդհակառակն օրական տաս մուրացիկ նորա դուռն են գալիս բան աղերսելու։

Վաղուց է, որ Թիֆլիսի կուսակալն բանտարկել է բաղէշցիների երեսելի մարդիկը և պահանջում է մի հանրագիր՝ ստորագրված ժողովրդեան բոլոր դասակարգի աստիճանաւորներէն, որոնք պէտք է ստեն տարածված լուրերն Սասնոյ վերաբերմամբ. այսքան էլ ապուշ միտք. երևի մոռացած են, որ Թիֆլիսի նկուղներում մի ամսից աւել ճգնում են Ցալորկայ՝ և այլոց իշխաններն ու գիւղապետներ...

Հացի արժէքը չափազանց է. Մշոյ քիլէն 2 ոսկի է, և կորեկը 1 ոսկի։ Աստուած հեռու անէ, եթէ հացը մի քիչ ևս բարձրանայ՝ ժողովրդից շատերն սովամահ կը լինին...։

Տ—ի

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յունվարի։ Պետական կալուածների և մինիստրութեան կից կազմված առանձին խորհրդակցութեան անդամները, որոնք ստորին գիւղատնտեսական դպրոցների հոգաբարձուներից, կառավարիչներից և ուսուցիչներից են բաղկացած և որոնք քննում էին այդ դպրոցների կազմակերպութեան վերաբերեալ հարցերը, աւարտելով իրանց աշխատանքները, խնդրեցին դնել առ ոտս Նորին Կայսերական Մեծութեան իրանց հաւատարիմ հպատակութեան զգացմունքները և իրանց պատրաստականութիւնը ծառայել իրանց ոյժի չափ գիւղատնտեսական գիտութիւնները տարածմանը ժողովրդի մէջ։ Թագաւոր Կայսրը, յունվարի 16-ին, երկրագործութեան մինիստրի արած ամենահպատակ զեկուցումից յետոյ, Ամենաողորմածաբար հրամայել բարեհաճեց՝ հաւատարիմ հրպատակութեան զգացմունքներ արտայայտելու համար «շնորհակալութիւն յայտնել»։

Կայսերական ռուսաց աշխարհագրական ընկերութեան տարեկան ժողովում ընկերութեան փոխնախագահը կարդաց Բարձրագոյն հրովարտակը այն բանի մասին, թէ Նորին Մեծութիւնը ընդունում է աշխարհագրական ընկերութիւնը իր Օգոստափառ հովանաւորութեան ներքոյ։ Այնտեղ և եթ յայտարարվեց, որ Թագաժառանգ Ցէսարեվիչ ընդունում է ընկերութեան Պատուաւոր Անդամի կոչումը։

«Новости» լրագրի խօսքերով, Կրէմէնչուգի հրէական հասարակութիւնը հեռագրով խնդրեց ներքին գործերի մինիստրից՝ արկանել առ ոտս Նոցա Մեծութիւնների ամենահպատակ զգացմունքները։ Նոցա Մեծութիւնների պատկառելի անցքը արժանայիշատակ դարձնելու համար, հասարակութիւնը հիմնում է արհեստագիտական դպրոց, որի համար նուիրեց տեղ։ Վաճառական Նեմէց նոյն նպատակի համար նուիրեց մի անշարժ կալուածք՝ 20.000 ր. արժողութեամբ. վաճառական Զէլիկման նուիրեց 5.000 բուբլի։

ՊԱՐԻԶ, 20 յունվարի։ Պատգամաւորների ժողովը որոշեց 20,000 ֆրանկ մարշալ Կանրօբէրի թաղման համար։

ԼՕՆԴՕՆ, 20 յունվարի։ Ուէլսի իշխանը, թագաւորական տան ուրիշ պրինցներ և շատ բարձրաստիճան անձինք շնորհաւորեցին մեր դեսպան Ստաալի յիսնամեայ յօբելեանը։ «Daily Telegraph» լրագիրը, նուիրելով յօբելեարին մի առաջնորդող յօդուած, ասում է. «Ռուսաստանի և Անգլիայի յարաբերութիւնները բարեկամական էին մնում, սկսած Եօան Գրօզնիի և Ելասաւետայի թագաւորութիւնից մինչև Կրիմի պատերազմը։ Ներկայումս վերանորոգվեց հին բարեկամութիւնը։ Պատկառելի յօբելեարը կարող է պարծենալ նրանով, որ ինքն նպաստել է այդպիսի բարեյաջող փոփոխութեանը երկու զօրեղ պետութիւնների քաղաքականութեան մէջ։

ԲԵԼԳՐԱԴ, 20 յունվարի։ Ալէքսանդր թագաւորի Բիարրից գնալու նպատակը, ինչպէս լսվում է,

իր ծնողների մէջ հաշտութիւն կայացնելն է, ի նկատի առնելով, որ մտադրութիւն կայ պսակել Ալէքսանդր թագաւորին Հէսսէնի Սիբիլլա իշխանուհու հետ։

ՍՕՖԻԱ, 20 յունվարի։ Պրինց Բորիսի ծննդեան օրվայ առիթով, Ստամբուլով չնորհաւորական նամակ ուղարկեց Կոբուրգեան Ֆերդինանդին։

Մի մեծ պետութեան ներկայացուցչի զեկուցումներից երևում է, որ Կոբուրգեան Ֆերդինանդ պրինցը օրից օր աւելի և աւելի ենթարկվում է Յանկովի ազդեցութեանը։ Լինելով persona grata, Յանկով նպատակ ունի բարեկամացնել Բոլգարիան Ռուսաստանի հետ, և այդ բարեկամութիւնը մոտիկ ապագայում կը հաստատվի։

ԽՐԻՍՏԻԱՆԻԱ, 20 յունվարի։ Մինիստրութիւնը հրաժարականի խնդիրք ներկայացրեց թագաւորին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յունվարի։ Պետերբուրգի քաղաքագլխի կողմից ի պատիւ մայրաքաղաքում գումարված Ռուսաստանի քաղաքագլուխների տուած ճաշին, հարց ծագեց այն բանի մասին, թէ պէտք է միջնորդել, որ թոյլ տրվի ժամանակ առ ժամանակ կազմել քաղաքագլխների համագումար ժողովներ՝ մտքերի փոխանակութեան համար քաղաքային տնտեսութեան զանազան հարցերի մասին։

ՊԱՐԻԶ, 20 յունվարի։ Սենատն ընդունեց 216 ձայներով 7-ի դէմ ներումն չնորհելու վերաբերեալ օրէնքը։

Ռուսաց եկեղեցում երէկ հոգեհանգիստ կատարվեց Գիրսի համար։ Ներկայ էին՝ հանրապետութեան նախագահի և մինիստրնախագահի ներկայացուցիչները, արտաքին գործերի մինիստր Հանոտո և շատ դիպլոմատներ։

ՄԱԴՐԻԴ, 20 յունվարի։ Հրաժարական տուած գեներալ Ֆաչնոն փայտով խփեց Մարսկիսի դեսպանին, որի համար զինուորական դատարանին է ենթարկված։ Ասում են, որ գեներալը խելագար է։

ՋԻՖՈՒ, 20 յունվարի։ Երկու օր շարունակվող հրացանաձգութիւնից յետոյ, եապոնացիները չորեքչաբթի գրաւեցին Վէյ-խայ-Վէյ։ Չինացիները փախան, կորցնելով 2,000 հոգի սպանվածներ և վիրաւորվածներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յունվարի։ Երէկ, Ի Տէր Հանգուցեալ Կայսր Ալէքսանդր III-ի վախճանից երեք ամիս անցնելու օրը, Պետրոպալլովսկ տաճարում մատուցվեց պատարագ և կատարվեց հոգեհանգիստ։ Ժամասացութեանը ներկայ էին՝ Նոցա Կայսերական Մեծութիւնները և Կայսերական ընտանիքի անդամները։

Ժողովրդական լուսաւորութեան, ներքին գործերի և արդարադատութեան մինիստրները և ս. սինոդի օբէր-պրոկուրորը վճռեցին՝ իսպառ դադարեցնել «Русская Жизнь» լրագրի հրատարակութիւնը։

ՐԷՆՏ, 21 յունվարի։ Թէհրանով անցնելով այստեղ հասաւ գեներալ Կուրոպատկինի ռուսական արտակարգ դեսպանութիւնը։ Ընդունելութիւնը Պարսկաստանում շատ հանդիսաւոր է։

ԼՕՆԴՕՆ, 21 յունվարի։ Եապոնիայից հաղորդում են, որ խաղաղութիւն կապելու նպատակով բանակցութիւնների համար եկած չինական դեսպանները երէկ ընդունեց եապոնական մինիստրնախագահը և արտաքին գործերի մինիստրը։ Եապոնական պատգամաւորների ժողովը միաձայն քուէարկեց անսահման կրեդիտ տալ պատերազմ վարելու համար Չինաստանի դէմ։

Կ. ՊՕԼԻՍ, 21 յունվարի։ Լէրոսեան արքեպիսկոպոսը տիեզերական պարիարք է ընտրված «Անտիմ ութերորդ» տիտղոսով։

Մի հարբած զինուոր, հինգշաբթի, սպանեց և մասամբ էլ վիրաւորեց 13 հոգի։ Սուլթանը նը-պաստ նշանակեց այդ դաղանային յանցանքի զոհերին։

ԲԷԼԳՐԱԴ, 21 յունվարի։ Կ. Պոլսում հիմնվեց թիւրքահպատակ սերբերի մի օրգան, «Courrier de Constantinople» անունով։

ԲՈՒԽԱՐԷՍՏ, 21 յունվարի։ Երեք շաբաթ առաջ պսակված երիտասարդ իշխան Ստուրդզա, սենատոր Գէորգի Ստուրդզայի որդին, անձնասպանութիւն գործեց, դրանից առաջ սպանելով իր սիրուհուն։

ՋԷՐՆՕՎԻՑԻ, 21 յունվարի։ Պաշտօնապէս յայտարարված է, թէ Սեվաստոպոլում գոյութիւն ունի մի ընդարձակ կազմակերպութիւն, որի միջոցով հրէաները գաղտնի կերպով ծխախոտ էին անցկացնում Ռուսաստանից։ Բռնված է մաքսանենդների խումբը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յունվարի։ «Новое Время» լրագրին Լօնդօնից լուր են հաղորդում, որ պրինց Ֆէրդինանդը, որը այժմ կատարելապէս գտնվում է Յանկովի ազդեցութեան տակ, պատրաստ է հրաժարվել դահից յօգուտ իր որդու կանդիդատուրիայի։

ԵՐՈՒՍԱՂԷՄ, 21 յունվարի։ Երուսաղէմի ռուս բնակիչները ուղարկեցին, Նորին Մեծութեանը մատուցանելու համար, ամենահաւատարիմ ուղերձներ և Ս. Երրորդութեան պատկեր, որ նկարված է Մորենու անտառի բազմադարեան կաղնու վրա։ Թագաւոր Կայսրը, վերոյիշեալ ուղերձների և պատկերի ներկայացման մասին արած ամենահպատակ զեկուցման վրա բարեհաճեց իր սեփական ձեռքով գրել՝ «Անկեղծ չնորհակալեմ»։

«Новости» լրագրի տեղեկութիւնների համեմատ, Կայսերական Ակադէմիային կից կազմված է յանձնաժողով, կանոններ մշակելու համար ի ղեկավարութիւն ակադէմիայի՝ գիտնականների, գրականագէտների և պուբլիցիստների իրաւունքներին վերաբերեալ հարցերը լուծելու ժամանակ, երբ օգնութիւն է հարկաւոր հասցնել նրանց բարձրագոյն հրամանով տրված 50,000 ր. գումարից։ Յանձնաժողովում ներկայացուցիչներ են նշանակված՝ գիտութիւնների ակադէմիայից—փոխ-նախագահ Մարկով և քարտուղար Դուբրովին, ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնից—փոխ-դիրեկտոր Լատիշէվ և Պետերբուրգի համալսարանի պատմա-լեզուագիտական ֆակուլտէտի դեկան Պամիալովսկի, ֆինանսների մինիստրութիւնից, մինիստրի ընդհանուր կանցելարիայի դիրեկտոր Բօմանով և պետական կալուածական բանկի կառավարիչ կոմս Գոլենիշչէվ—Կուտուզով։ Յանձնաժողովում կը նախագահի Լ. Ն. Մարկով։

Կայսերական պալատի մինիստրը Ալէքսանդր III Կայսրի դերեզմանի վրա դրեց Դանիայից ուղարկված ոսկէ պսակը «Fra Denemark» վերտառութեամբ։

Նոր երկաթուղիներ կառուցանելու համար կազմված յատուկ յանձնաժողովին ներկայացրված են մի շարք հետազօտութիւններ, որ կատարվել են Զէրնօմօրեան ծովափեան երկաթուղու գիծ անցկացնելու վերաբերմամբ։ Նախագծվող երկաթուղիական գծի ընդհանուր տարածութիւնը հաշված է 295 վերստ։ Այդ գծի կառուցման արժողութիւնը—17,110,000 ռուբլի է։ Նախագծով, գիծը կը սկսվ Նովոռոսիիսկից և կերթայ դէպի Նովո-Սենակի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յունվարի։ Թոյլ է տրված պետական գանձարանից 12,000 ր. տալ հանգուցեալ ակադէմիկոս Գրոտի գրուածները հրատարակելու համար։

ՊԱՐԻԶ, 21 յունվարի։ Ռուսաց զինուորական գործակալը մի պսակ դրեց մարշալ Կանրոբէրի գերեզմանի վրա, գեներալ—ֆէլդմարշալ Գուրկոի կողմից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 յունվարի։ Երէկ ներկայացաւ Նոցա Մեծութիւններին «Royal Scots Guys» չօտլանդական այն հեծելազօր գնդի պատգամաւորութիւնը, որի չէֆ է թագաւոր Կայսրը։ Նորին Մեծութիւնը իր գնդի չօտլանդական համազգեստով էր։ Պատգամաւորութիւնը մատուցեց թագաւոր Կայսրին մի պատկեր, որի վրա նկարված է վերոյիշեալ գնդի զօրահանդէսը, իր Օգոստափառ Շէֆի գլխաւորութեամբ։

Պետական խորհրդում քննվելու է ռուսաց հրապատակութիւնը ընդունելու և թողնելու վերաբերեալ կանոնների ծրագիրը։

1894 թուի յունվարի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը պետական սովորական եկամուտները աւելի էին սովորական ծախսերից $150\frac{1}{2}$ միլիոնով։

«Journal de St.-Petersbourg» լրագիրը հաղորդում է, որ Վիլհէլմ կայսրի ցանկութեամբ գերմանական դեսպանը ծաղիկներից մի չքեղ պսակ դրեց Գիրսի գերեզմանի վրա։

«Моск. Вѣд.» լրագիրը լսել է, որ վճռված է վերացնել ակցիզ առնելը ասիական չուկաները ուղարկվող լուցկիներից։

ՐՕՍՏՕՎ (Դոնի վրա), 22 յունվարի։ Տեղական և կովկասեան ոչխարապահները միջնորդում են՝ ոչխարապահների համագումար ժողով կազմել Բոստովում։ Տեղական բուրդ արդիւնաբերողների մէջ միտք է ծագել՝ թէ անհրաժեշտ է իւրաքանչիւր տարի համագումար ժողով կազմել Բոստովում։

ԿԱԶԱՆ, 22 յունվարի։ Կազանի տնտեսական ընկերութիւնը վճռեց գիւղատնտեսական ցուցահանդէս կազմել 1896 թուի փետրվարին։

ՊԱՐԻԶ, 22 յունվարի։ Ներումն չնորհման վերաբերեալ օրէնքի պատճառով, Բոշֆոր վերադառնում է Ֆրանսիա։

Զանգիբարով հաղորդում են, որ հավասները մի անաջող փորձ արին յունվարի 23-ին՝ ռմբակոծել Տանանարիվա։ Ֆրանսիական մի զինուորական նաւ և ֆրանսիական ծովափնեայ թնդանօթները շուտով ստիպեցին հավասներին դադարեցնել կրակը։ Հավասներից մի թնդանօթ է խլված։

ԲԷԼԳՐԱԴ, 22 յունվարի։ Կառավարութիւնը սկսուպչինայում մտցրեց մի առաջարկութիւն՝ 500 հազար դենար տալ Միլան Օբրէնօվիչին։

ՇԱՆԳՀԱՅ, 22 յունվարի։ Լսվում է, որ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դեսպաններին Պէկինում և Տօկիոում յանձնարարված է խորհուրդ տալ չինական և եապօնական կառավարութիւններին՝ մի կերպ համաձայնութեան գալ խաղաղութեան պայմանների մասին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յունվարի։ Երէկ Ձմերային պալատում բաղդ ունեցան ներկայանալու թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէոդորովնային պալատական և քաղաքային տիկինները, որոնք մուտք ունեն պալատում։

ՕԴԷՍԱ, 23 յունվարի։ Ռուսաց մամուլին արված բարձրագոյն չնորհի առիթով՝ «Новороссійскій Телеграфъ» և «Одесскій Листокъ» լրագիրների կողմից թագաւոր Կայսրին ուղարկած չնորհակալական ուղերձին Պալատի մինիստրից հետևեալ հեռագիրն է ստացվել. «Ձեր հեռագիրը զեկուցանելով, Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրը ուրախութիւն յայտնեց, որ կարողացաւ օգնութեան գալ մամուլի չքաւոր գործողներին։

ՊԱՐԻԶ, 23 յունվարի։ Մարշալ Կանրոբէրի թաղումը կատարվեց ահագին հասարակութեան ներկայութեամբ։ Ցուղարկաւորութեան հանդիսի ճանապարհի վրա երկկարգ կանգնած էին զօրքերը. կառքերով տանվող պսակների մէջ ուշադրութիւն էին գրաւում՝ անգլիական թագուհու, իտալական թագաւորի և ռուսաց զօրքի կողմից դրված պսակները։ Ոչինչ դէպքեր տեղի չունեցան։ Թաղման կարգը կատարվեց «ինվալիդների տաճարում», ներկայութեամբ հանդուցեալի ընտանիքի, մինիստրների, գեներալների, դիպլոմատիական կորպուսի, Պարիզի արքեպիսկոպոսի և բարձրաստիճան անձանց։

Բոշֆորի դիմաւորումը չատ բաղմամարդ էր, ցոյցերը աղմկալի։ Ինցիդենտներ չը կային։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յունվարի 20-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ . .	93	ր.	— կ.
Բերլին վրա 100 մարկ — . .	45	»	50 »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	36	»	85 »
Ոսկի — — արժէ . .	7	»	43 »
Մաքսային կուպօններ — . .	148	»	25 »
Արծաթ — — — . .	—	»	— »
Բօրսային դիսկօնտ — . .	5	»	7%
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի .	—	»	— »
— — — — 2-րդ .	—	»	— »
— — — — 3-րդ . .	—	»	— »
$4\frac{1}{2}$% պետական բէնտա.. . . .	96	»	— »
5% ոսկեայ բէնտա 1894 թ. . . .	162	»	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	—	»	— »
— — — 2-րդ —	—	»	— »
— — — 3-րդ —	—	»	— »
— — — 4-րդ —	—	»	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	230	»	— »
— — երկրորդ —	226	»	50 »
5% պետական երկաթուղ. բէնտա.	101	»	75 »
4% ներքին փոխառութեան . . .	$96\frac{1}{8}$	»	— »
$4\frac{1}{2}$% գրաւական թղթեր կալուած.	$101\frac{1}{8}$	»	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.			
Դրաւ. թղթ. — — .	193	»	75 »
$4\frac{1}{2}$% վկայակ. գիւղ. հող. բանկի.	101	»	25 »
$4\frac{1}{2}$% գրաւական թղթեր կալուած.	—	»	— »
Փոխ. կրեդիտ. ընկերութ. մետալ.	152	»	50 »
— — — թղթադ. .	—	»	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.	—	»	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	$100\frac{7}{8}$	»	— »
Օդէսայի — —	100	»	25 »
Թիֆլիսի — —	98	»	25 »
Դրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	98	»	50 »
— — Բուլթայիսի — .	98	»	75 »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ՏԻԿԻՆ

Թիֆլիսում, Պանասեվիչի փողոցում կորցրել է մի քսակ, մէջը 75 ռուբլի 95 կոպէկը։ Դա նրա վերջին փողն էր. Թիֆլիս եկել է բժշկվելու համար, և կորցնելով այդ փողը, մնացել է առանց միջոցների։ Ուսաի խոնարհաբար խնդրվում է գտնողից բարի լինել և փողը հասցնել Թիֆլիսի Պոլիցիմէյստրին, որից և փողի տէրը կը ստանայ։ Գտնողին կը տրվի վարձատրութիւն։

(№ 6) 2—2

ՓՈՐՁՎԱԾ ԵՒ ՀՄՈՒՏ ՎԱՃԱՌԱԿԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆ ՄԻՆԱԻԶ ՄԵԼԻԲԵԱՆՑԸ պատիւ ունի յայտնելու, որ Աղստաֆա կայարանում ընդունում է յանձնարարութիւն ամեն տեսակ ապրանքներ ուղարկելու համար ըստ պատկանելոյն, համաձայն պատուերներ ուղարկողների։

Հասցէն՝ Акстафа, Мнацакану Меликову.

(№ 6) 2—8

ՕՖԻՑԷՐ

Իր ուսման ընթացքն աւարտած գեներալի շտաբի ակադէմիայում, աջողութեամբ պատրաստում է օֆիցերի քննութիւն տալ ցանկացողներին, նոյնպէս և զինուորական և իւնկէրների դպրոցները մտնելու համար։

Հասցէն. Միխայլովսկայա փ. № 119։

(№ 7) 2—3

Համաձայն Բարձրագոյն հաստատված Բագուի Հայոց

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Կանոնադրութեան 17 և 26 յօդուածների՝ ներկայ յունվարի 28-ին, շաբաթ օրը, երեկոյեան 7 ժամին, դպրոցական նոր շինութեան մեծ դահլիճում կը կայանայ ընդհանուր ժողով, ուր կը քննվին անցեալ 1894 թ. դրամական հաշիւները, կը քննվի ու կը հաստատվի ներկայ 1895 թ. համար խորհրդի կազմած նախահաշիւը, կը վճռվին ընթացիկ գործեր և կընտրվի 2 տարի ժամանակով խորհրդի նախագահ։

(№ 7) 2—5

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆՑԻ

Ընդունում է երթևեկ, կլասգիներօթիկ և գիշերօթիկ աշակերտներ, պատրաստում է գիմնազիայի, բեալական ուսումնարանի, կադէտների կորպուսի և այլ ուսումնարանների համար։ Սօլօլակ, Գանօվսկայա փ. № 11. (№ 127) 7—10

Նոյեմբերի 20-ից ստացվել է Պաստեօրի սիստեմով պատրաստած ԲՐՈՒՍԱՅԻ ԲՕԺՇԻ ՍՊԻՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԸ, որ արդէն անցեալ տարիներից յայտնի է Կովկասում և Պարսկաստանում իր յատկութիւններով և տուած առատ բերքով։

Սերմը ստացված է ուղղակի յայտնի "Էկսնօմիտես„ ֆիրմայից։

Գնել ցանկացողները կարող են դիմել՝ ԲԱԹՈՒՄ, ԹԻՖԼԻԶ, ԲԱԳՈՒ, եղբ. Մնացականեաններին, իսկ ՆՈՒԻԻ՝ Աղայ Մուսայ Մահմեդովին։

Այս հասցէով, Бр. Мнацаканянцъ, Батумъ կամ Тифлисъ կամ Ба...

(№ 136) (չ. ե.) 14—25

ԿԱԿԱՕ ԲԼՕԿԷՐ

ՍՆՆԴԱՐԱՐ ԽՄԻԶՔ (գլխաւոր պահեստը Ռուսաստանի համար „ԵԱՎԱ" ֆիրմայի մէջ. (С.-Петербургъ, Большая Морская, 38).

Ծախվում է կօշնիալ և դեղային ապրանքների բոլոր լաւ մաղազիններում $1/1$, $1/2$, $1/4$ և $1/8$ կիլոգրամանոց թիթեղեայ տուփերի մէջ։

(GRAND PRIX) Բարձրագոյն պարգև Անավէրպէնի համաշխարհային ցուցահանդիսում 1894 թուին։ (№ 151) 3—50

Дозволено цензурою, Тифлисъ, 23 Января 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.